

Լեզվաբանություն և բանասիրություն

Լալիկ Խաչատրյան

*Խ. Արովյանի անվան Հայկական պետական մանկավարժական
համալսարանի լեզվաբանական հետազոտությունների լաբորատորիայի վարիչ,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Էլ. հասցե՝ lingualal51@mail.ru*

DOI: 10.53614/18294952-2023.1-140

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԱՐՄԱՏԱԿՐԿՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՐԻ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԼԵԶՎՈՒՄ

Սույն հոդվածի նպատակն է քննել արմատակրկնությամբ ձևավորված վերլուծական բարդությունները, որոնք հինգերորդ դարի հայերենում որոշակի շերտ են կազմում համադրական կրկնավոր բարդությունների հետ: Վերլուծական կրկնավորները դիտարկվում են Աստվածաշունչ մատանի թարգմանական գրքերում և հինգերորդ դարի ինքնուրույն պատմագրության լեզվում: Քննության այս ձևաչափը հնարավորություն է ընձեռում որոշելու վերլուծական կրկնավորների գործառական հաճախականությունը թարգմանական և ինքնուրույն մատենագրական հուշարձաններում: Սյուս կողմից՝ բացահայտվում են կրկնավոր վերլուծական բարդությունների ձևակազմական կաղապարները, որոնք ցույց են տալիս հին հայերենի բառակազմական հնարավորությունները և կրկնավորների բառակազմական տիպերը:

Հիմնաբառեր. Աստվածաշունչ, արմատակրկնություն, բառագիտություն, անկախ արմատ, կաղապար, վերլուծական բարդություն, հին հայերեն:

Ներածություն

Բառակազմության եղանակներից է արմատակրկնությունը, որի միջոցով ստեղծվել են համադրական և վերլուծական մի շարք բարդությունները: Այդ

կարգի բարդությունները ընդհանուր հայերենի բառային կազմի անքակտելի մասն են կազմում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ արմատակրկնությամբ ձևավորված բարդությունները տարբեր հաճախականությամբ գործածվել են հինգերորդ դարում և մեր լեզվի զարգացման հաջորդ գոյավիճակներում:

Ըստ այդմ՝ աշխատանքում զուգահեռներ են տարվում Աստվածաշնչի և հինգերորդ դարի պատմիչների երկերի միջև՝ պարզելու վերլուծական կրկնավոր բարդությունների գործառական հաճախականությունը տարբեր ուղղվածության և տարբեր ոճերի երկերում:

Մեր ընտրանքում եղած վերլուծական կրկնավորներ բարդությունները հինգերորդ դարում հանդիպում են տարբեր կառուցատիպերով. կան ինչպես պարզ արմատների կրկնությամբ վերլուծական կառույցներ, այնպես էլ նախդիրներով ձևավորված կրկնավորներ, ինչպես՝ *արագ արագ, մանր մանր, դաս դաս, յոյժ յոյժ, երկու երկու, եւթն եւթն* և *խառն ի խուռն, դէմ առ դէմ, լու ի լու* և այլն:

Սյուս կողմից՝ արմատական կրկնավոր բարդությունների մեջ կրկնվող բաղադրիչները հանդիպում են նաև հոդերի կրկնություններ, ինչպես՝ *շեղջու շեղջու, գունդս գունդս* և այլն:

Մեթոդ

Վերլուծական կրկնավորների հետազոտությունը կատարվել է պատմա-համեմատական մեթոդի համաժամանակյա ուսումնասիրության եղանակով: Ուսումնասիրությունը կատարվել է երկու կտրվածքով. նախ դիտարկվել են վերլուծական բարդություններն ըստ պարզ արմատների խոսքիմասային արժեքների, ապա՝ ըստ նախդրավոր կառուցատիպերի:

Արդյունքներ և քննարկում

Արմատակրկնությունը (ռեդուբլիկացիան) բառակազմության եղանակ է, որի դեպքում բարդ բառեր են կազմվում միևնույն հիմքի, արմատի կամ ամբողջական բառերի կրկնությամբ (Պետրոսյան, 1987, էջ 76: Стариченок, 2008, էջ 516): Ըստ Հր.Աճառյանի՝ հայերենի կրկնավորների թիվը հասնում է շուրջ 500-ի (Աճառյան, 1957, էջեր 83-93):

Ընդհանրապես, կրկնավոր բարդությունները հանդես են գալիս երկու կարգի կաղապարով. համադրական և վերլուծական:

Մասնագիտական գրականության մեջ համադրական կրկնավոր բարդությունները բաժանում է երկու տեսակի՝ *անկախ արմատներով* (այլայլել, մեծամեծ, գոյնագոյն, գունդագունդ և այլն), որ կոչում է *լիակապար արմատակրկնություն*, և *կախյալ արմատներով* (գրգռել, արհամարհել, խարխափել, ծանծաղ, պապանձիլ և այլն), որ կոչում է *մասնակի արմատակրկնություն* (Туманян, 1972, էջեր 168-170):

Վերլուծական կրկնավոր բարդությունները հանդես են գալիս արմատների անջատ գրությամբ (արագ արագ, գունդ գունդ և այլն), կամ նրանց

բաղադրիչները միավորվում են նախդիրներով (օր ըստ օրէ, դէմ ընդ դէմ և այլն). վերջիններս արտահայտության պլանով համընկնում են բառակապակցական կաղապարներին:

Ա.Բագրատունին իր աշխատանքի «Յաղագս բարդութեան բառից» գլխում, քննելով արմատակրկնությամբ առաջացած բարդությունների տեսակները, նկատում է. «Այսպէս երբեմն մի եւ նոյն անուն բարդեալ գտանի ինքն ինքեամբ. պէսպէս, վաղվաղ, վազվազ, բաղբաղայք, բեկբեկ, ծործոր, լուռլուռ» (Բագրատունի, 1852, էջ 660):

Էդ. Աղայանը նկատում է, որ «կրկնական բարդությունների բաղադրիչները պարզապես կրկնվող բառն ինքն է՝ ամբողջությամբ կամ մի մասով միայն՝ ... Կրկնավոր հարադրությունները բառակապակցություններ չեն, հետևաբար և չունեն կապակցության քերականորեն միմյանց հետ կապված անդամներ. բառակրկնությունները, որպես վերլուծական բաղադրություններ, ունեն կրկնության եզրեր կամ մասեր, որոնց միավորումով էլ կազմվում են կցական բնույթի կրկնական բարդությունները» (Աղայան, 1984, էջեր 275–276):

Գ. Ջահուկյանն այն տեսակետն է հայտնում, որ կրկնավոր բարդություններն առաջացել են ժամանակագրական տարբեր փուլերում՝ հնդեվրոպական և հետհնդեվրոպական շրջաններում (թիթեռ, բողբոջ, տրտունջ, գրգիռ, թրթրո...), հնագույն և հին շրջաններում (հետզհետե, մերթընդմերթ...), և ներկայանում են ձևակազմական տարբեր կաղապարներով: Այնուհետև խոսելով կրկնության անդամների արժեքների մասին՝ նկատում է, որ «դրանցից մեկը կրկնության հիմքն է, մյուսը՝ նմանակը», և կրկնության հիմնական անդամը կոչում է կրկնյալ, նմանակը՝ կրկնորդ (Ջահուկյան, 1989, էջ 215):

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Աստվածաշունչ մատյանը հայերեն առաջին (թարգմանական) աշխատանքն է՝ մեզ հետաքրքրում է հարցադրումների հետևյալ շրջանակը. հնագույն շրջանից ավանդված կրկնավոր բարդությունները ինչպիսի գործածություն են ունեցել Աստվածաշնչի թարգմանական գրքերում (Աստուածաշունչ, 1997), ինչպիսին է դրաց գործառական հարաբերակցությունը Աստվածաշնչում և հինգերորդ դարի պատմիչների աշխատություններում:

Աստվածաշնչի լեզվին անդրադառնալիս Մ. Աբեղյանը նկատում է. «Աստվածաշնչի լեզուն սկզբից հենց մեր հին գրականության համար դարձել է կլասիկական իր քերականությամբ, իր բառերով ու դարձվածքներով, պատկերավոր ասացվածքներով ու բանաձևերով. և այսպես ոչ միայն կրոնական, այլև պատմական ու բանաստեղծական երկերի համար, մասավանդ այն հետագա շրջանում, երբ գրաբար լեզուն այլևս կենդանի խոսակցական չի եղել» (Աբեղյան, 1968, էջ 108):

Աստվածաշնչի լեզվին ու ոճին առանձին աշխատանք է նվիրել Վ. Առաքելյանը. նա այն կարծիքն է հայտնում, որ այն գրված է պարզ լեզվով, ավելի մոտ է ժողովրդախոսակցական տարբերակին, քանի որ Սուրբ գիրքը թարգմանված էր ժողովրդական լայն զանգվածների համար, մյուս կողմից՝

1 Այս առումով Գ. Ջահուկյանն այլ տեսակետ է հայտնում. «Առաջին հայացքից կարծեք թե կրկնության անդամները հավասարաթեք են, սակայն իրականում դրանցից մեկը կրկնության հիմքն է, մյուսը՝ նմանակը» (Ջահուկյան, 1989, էջ 215):

թարգմանիչները «դավանում էին լեզվաոճական առաջադիմական սկզբունքներ»։ «Աստվածաշունչը թարգմանվում էր ժողովրդի համար. թարգմանիչների ազնիվ մտահոգությունն էր այնպես թարգմանել, որ ժողովրդի բոլոր խավերը կարդան ու հասկանան. բայց և կար մի այլ պարագա. սրբազան գիրքը պետք է ունենար իր պատշաճ լեզվաոճական մակարդակը, որ թարգմանիչները չէին կարող նկատի չունենալ, մանավանդ որ հին կրթության մեջ ոճաբանությունը ճարտասանական արվեստի սկզբունքների տեսանկյունով ուսուցվում էր» (Առաքելյան, 1984, էջ 10)։

Ն. Բյուզանդացին, հինգերորդ դարի ոճերն առանձնացնելիս, Աստվածաշունչ մատյանը գետեղում է *Եզնիկյան դասի մեջ*, որ աչքի է ընկնում բաների ընտրությամբ, ներդաշնակ շարադասությամբ, հարուստ է դարձվածքներով, ասացվածքներով, հոմանիշներով, ճարտասանական միջոցներով (Մկրտչյան, Խաչատրյան, 2016, էջ 68)։

Աստվածաշունչում գործածված կրկնավոր բարդությունները հիմնականում ներմուծել են թարգմանիչները. Ս.Գրքի հունարեն բնագրում, նրանից թարգմանված լատիներեն, գերմաներեն, անգլերեն և հին ռուսերեն տարբերակներում կրկնավոր բարդությունները, հայերենի հետ համեմատած, խիստ նվազ տոկոս են կազմում կամ գրեթե չեն հանդիպում²։

Վերլուծական կրկնավոր բարդությունները հինգերորդ դարի մակարդակում քննելիս մենք ելակետ ենք ընդունում Աստվածաշունչը՝ որպես առաջին մատենագրական երկ, և այդ համատեքստում փորձելու ենք ցույց տալ կրկնավոր բարդությունների գործառական հաճախականությունը մատենագրական այլ երկերում, որոնք ժամանակագրական առումով հաջորդել են Աստվածաշունչ մատյանին։ Դրանք են Խորենացու, Բյուզանդի, Եղիշեի, Եզնիկի, Փարպեցու, Ագաթանգեղոսի և Կորյունի աշխատությունները³։

Աստվածաշունչի թարգմանական գրքերում և հինգերորդ դարի մատենագրական հուշարձաններում գործածված վերլուծական կրկնավորները կարելի է ուսումնասիրել տարբեր հայեցակետերով. մենք նախընտրում ենք դրանք ներկայացնել ըստ կրկնվող բաղադրիչների խոսքիմասային արժեքների և ըստ կապակցող նախդիրների։ Ըստ առաջին մոտեցման՝ կարելի է առանձնացնել գոյականական, ածականական, թվականական, մակբայական և բաղադրիչներով վերլուծական կրկնավոր բարդությունների տիպերը։

ա) Գոյականական բաղադրիչներով ձևավորված կրկնավորներ

Այս կարգի կրկնավորների սերիչ կաղապարներ են դառնում հետևյալ գոյականական բաղադրիչները՝ *դաս, գունդ, շեղջ, օր* և այլ բառեր։

Աստվածաշունչում հանդիպում են վերաբերյալ բաղադրիչներով ձևավորված հետևյալ վերլուծական կրկնավոր բարդությունները։

2 Մենք այս տեսակետին հանգել ենք՝ ուսումնասիրելով արմատակրկնության իրողությունը հին հայերենում և նրա համարժեքները ռոմանագերմանական լեզուներում (լատիներեն, գերմաներեն, անգլերեն) և հին ռուսերենում՝ ըստ Աստվածաշունչի թարգմանական գրքերի։ Տես, Խաչատրյան, 2023, Հ. 1 (26)։

3 Իբրև քննության բնագիր՝ դիտարկել ենք նաև Դավիթ Անհաղթի «Մահանք իմաստութեան» աշխատությունը, սակայն մեր ընտրանքում եղած կրկնավոր բարդություններից որևէ մեկն այնտեղ չի հանդիպել։

Դաս դաս⁴ վերլուծական բարդությունը գրաբարում առավելապես հանդիպում է համադրական կազմությամբ՝ *դասադաս*: Աստվածաշնչում գործածված է վերլուծական ձևով՝ *դաս-դաս*՝ «խումբ-խումբ, խմբերով» (հոգնակիության) իմաստով, հմմտ. Եւ բազմեցան *դասք դասք*, ուր հարելք եւ ուր յիսուն (Մարկ., 2. 40):

Այս կարգի անվանական հարադրությունները Աստվածաշնչում գործածված են -ս ածանցական տարրով, որ բառին հաղորդում է մակբայական արժեք ու նշանակություն: Այդ բառերն են *գունդս գունդս, դասս դասս, շեղջու շեղջու*:

Դիտարկենք այդ բառերը Աստվածաշնչի թարգմանական գրքերում:

Դասս դասս վերլուծական բարդությունը ձևավորվել է *դաս դաս* բարդության սերող հիմքով՝ մակբայակերտ ածանցի միջոցով, այն նշանակում է «խումբ առ խումբ, կարգով»: Անկախ բառական արժեքով գործածված է Աստվածաշնչում, հմմտ. «Ասէ զաշակերտսն, բազմեցուցէք զդոսս *դասս դասս*՝ յիսուն յիսուն (Ղուկ., Թ. 14):

Հինգերորդ դարի մատենագրության մեջ *դաս դաս* կրկնավոր բարդությունը գործածվել է Ագաթանգեղոսի և Կորյունի երկերում: Հմմտ.

Մեծն Մովսէս յանապատի անդ և ի պարզևական երկրին *դասք դասք* մարգարէից (Ագաթ., 249): Անդ տեսանէին *զդասս դասս* հրեշտակակրօս պաշտօնէիցն (Ագաթ., 419): Գումարել ի կողմանս *դասս դասս* զաշակերտեալսն ճշմարտութեանն (Կոր., 585): Գումարել ըստ արժանաւոր և պատեհ տեղեաց, *դասս դասս* դպրոցաց (Կոր., 70):

Շեղջու շեղջու կրկնավոր բարդությունը կազմվել է *շեղջ* արմատական բաղադրիչի կրկնությամբ՝ -ս մակբայակերտ ածանցի միջոցով⁵: *Շեղջու շեղջու* վերլուծական բարդությունը «դաս առ դաս, խումբ առ խումբ» իմաստով գործածված է Աստվածաշնչում, հմմտ. Եւ նոքա ածին զտասանորդս զուրակացն եւ ոչխարաց, եւ բերեալ կուտեցին *շեղջու շեղջու* (Բ. Մնա., ԼԱ. 6):

Հանդիպում է Բուզանդի և Ագաթանգեղոսի երկերում, ինչպես՝ Սկսալ ընկենուլ ի կղզի անդր ձուկն սաստիկ յոյժ, մինչև *շեղջու շեղջու* կուտէր ի ցամաքի կղզւոյն (Բուզ., 79): *Շեղջ շեղջ* կուտեալ էին առ դուրս հնձանին (Ագաթ., 395):

4 Կրկնավոր բարդության արմատական բաղադրիչը հանգում է իրանական աղբյուրին՝ խոտա-սակ. *dasa* «բաժին» կամ «դաս, կարգ» իմաստներով (ՋՄԲ, 185): Գրաբարում *դաս* արմատը նշանակում է «խումբ (մարդկանց, կենդանիների, առարկաների, զինվորների, հրեշտակների ևն.), կարգ»: Աստվածաշնչում գործածված է «մարդկանց՝ կենդանիների խումբ» իմաստով, հմմտ. Եւ էին ընդ նման, որ բառնային զտապանակն զւթն *դաս* պարուց (Բ. Թագ., 2. 13): *Դասադաս* համադրական բարդությունն ունի «դաս-դաս, խումբ-խումբ, խմբերով» (հոգնակիության) իմաստ, որ եզակի կիրառությամբ հանդիպում է Աստվածաշնչում, հմմտ. Դարձեալ յիրանքանչիւր ապարանիցն *դասադաս* մտանէին ի համաշխարհի խնդրուածս (Բ. Մակ., Գ. 18):

5 Կրկնավոր բարդության արմատական բաղադրիչի ծագումն անհայտ է, հավանական է համարվում նրա կապը խեթ. *šeli-* արմատի հետ՝ որպես փոխառություն՝ «հացահատիկի կույտ» նշանակությամբ (ՋՄԲ, 585): *Շեղջ* արմատն անկախ գործածություն ունի գրաբարում. այն նշանակում է «կույտ, դեզ (ցորենի, արմատիքների)»: Այդ իմաստով գործածված է Աստվածաշնչում, հմմտ. Եւ երթիցես ի գերեզման իբրև գցորեան հասեալ... իբրև *զշեղջ* կալոյ ի ժամանակի ամփոփեալ (Յովք, Ե. 26): *Շեղջաշեղջ* բարդությունը «շեղջ-շեղջ, կուտակ-կուտակ, խիտ առ խիտ» իմաստով գործածական է Աստվածաշնչում. հմմտ. Զերդմունս և գդաշինս հարցն յիշատակեալ՝ *շեղջաշեղջ* դիականցն անկելոց առ միմեանս՝ կացեալ ի մէջ դադարեցոյց զբարկութիւն (Իմաս., ԺԸ. 23):

Գունդա գունդա կրկնավոր բարդությունն Աստվածաշնչում գործածված է անվանաբայական հարադրության կազմում՝ *գունդա գունդա բաժանել*, որտեղ *գունդա գունդա* կրկնավորն ունի մակբայական նշանակություն՝ «տարբեր գնդերի՝ խմբերի (բաժանել)» իմաստով⁶: Հմնտ. Իսկ Մակաբեոս զգալուն ամենայն ի *գունդա գունդա* բաժանելը եւ ինքն իրով գնդան ի վերայ Տինոթեոսի հասանելը (Բ. Մակ., ԺԲ. 20):

Հանդիպում է Ագաթանգեղոսի, Բուզանդի և Եղիշեի երկերում: Հմնտ. Անդ էր տեսանել ի պարզևական երկրին *գունդա գունդա* մարգարեականս (Ագաթ., 163):

Գունդ գուդ հատանէին (Ագաթ., 22): *Գունդա գունդա* յամենայն աշխարհացն գումարէր ընդ նմա (Եղ., 88): *Գունդք գունդք* զօրաց ելանէին ի վեր (Եղ., 150): *Գունդք գունդք* գային նմա առաջի (Բուզ., 184):

բ) Ածականական բաղադրիչներով ձևավորված կրկնավորներ

Ածական բաղադրիչով կրկնավորներն այն յուրահատկությունն ունեն, որ կրկնավոր ձևերում հանդես են գալիս այլ խոսքիմասային արժեքով (եթե դրանք ածական//մակբայ տարարժեք բառեր չեն): Կրկնության այս տեսակը՝ ըստ կրկնության և իր բաղադրիչների հետ ունեցած գործառական հարաբերության, կոչվում է *փոխգործառական* (համակաղապարային կամ փոխկաղապարային), որի դեպքում առկա է խոսքիմասային փոխանցում (Զահուկյան, 1989, էջեր 216–217):

Այդ կարգի կրկնություն են ստեղծել *արագ* և *մանր* ածականները:

Արագ արագ կրկնավոր բարդության արմատական բաղադրիչը⁷ գրաբարում ունի «արագընթաց, կարճ ժամանակում, շուտ, շուտափույթ» իմաստներ, որ կենսունակ գործածություն ունի Աստվածաշնչում, հմնտ. Բարեկամքն ... իբրեւ տեսին, թէ այնպէս *արագ* հասանել ի վերայ նորա դատաստանն, զահի հարկանէին (Գ. Մակ., Բ. 11): Նախատիպից կազմվել է *արագ արագ* կրկնավոր բարդությունը՝ «անհապաղ, անմիջապես, իսկույն» իմաստներով, հմնտ. *Արագ արագ* կապտեսջիր եւ վաղվաղակի աւար հարկանիջիր (Եսայ., Ը. 3):

Հանդիպում է Բուզանդի և Ագաթանգեղոսի երկերում: Հմնտ. Վաղվաղակի *արագ արագ* դառնային ի նմանէ (Բուզ., 204): Զնոսա *արագ արագ* հնազաղեցուցէ իւրում պատկերին (Ագաթ., 47):

Մանր մանր բարդության արմատական բաղադրիչը գրաբարում առան-

6 Կրկնավոր բարդության արմատական բաղադրիչը՝ գունդ, «բազմություն, բանակ, զորագունդ» իմաստով հանգում է իրանական աղբյուրին՝ որպես փոխառություն, հմնտ. պիլ. ցսոմ «բանակ, գունդ», պրս. ցսոմ կամ ցսոմա «ժողով, գումար, խումբ, բազմություն» (ՀԱԲ, 1, 595): *Գունդ* բաղադրիչը արմատական նշանակությամբ գրաբարում կենսունակ գործածություն ունի. այդ իմաստներով գործածված է Աստվածաշնչում, հմնտ. Սոքա են *գունդք* ղևտացուց (Թիւք, Գ. 21): Համադրական *գունդագունդ* բարդությունն ունի «բազմամարդ, գունդ գնդի հետևից» իմաստներ, հմնտ. Ահաւասիկ ես ածից ի վերայ քո ... *գունդագունդ* հեծելովք ազգաց բազմաց յոյժ (Եզեկ., ԻԶ. 7): Աստվածաշնչում գործածված է «հորդահոս, առատորեն» իմաստով, հմնտ. Մինչև արիւնն *գունդագունդ* արտաքս հոսեր հոսեր, և վէրքն չարաչար պատառեալ էին (Բ. Մակ., ԺԲ. 45): Բառի՝ այս իմաստով գործածությունը հունաբանություն է՝ *աղբերաբար*: Հմնտ. Բուզանդի երկում բառի նույնիմաստ գործածությունը. Սկսաւ զարիւնն *գունդ գունդ* ի ներքուստ ընդ բերանին արտաքս հոսել (Բուզ., 183) :

7 Արմատական բաղադրիչը՝ *արագ*, ստուգաբանորեն հանգում է պիլ. *rag արմատին՝ ա- կամ ե- նախահավելված աճականով (ՀԱԲ, 1, էջ 291):

ձին գործածական բառ է՝ «մանր, փոքրիկ, ոչ մեծ» իմաստներով⁸, որ հանդիպում է Աստվածաշնչում, հմմտ. Եւ գմեղսն ձեր ... գորթն ... կոտորեցի եւ խորտակեցի գնա յոյժ, մինչեւ եղեւ *մանր* իբրեւ զփոշի (Բ. Օրէնք, Թ. 20): *Մանր մանր* վերլուծական բարդությունը «մաս-մաս, կտոր առ կտոր» իմաստով գործածված է Աստվածաշնչում, հմմտ. *Մանր մանր* կոտորեալ, զայս թոչնոց գէշագէշ ջանքեցից (Բ. Մակ., ԺԵ. 33)⁹:

Հանդիպում է միայն Եզնիկի երկում, ինչպես՝ Զորս և կերակուր նոցա մանր

ձկունք են, որպէս և օձից մեծամեծաց *մանր մանր* ինչ ձձիք կամ անասունք (Եզն., 104):

գ) Թվականական բաղադրիչներով ձևավորված կրկնավորներ

Քանական թվականների կրկնությամբ կազմվում են բաշխական թվականներ, որոնք արտահայտում են առականների քանակային բաշխում և հանդես են գալիս որոշային ու պարագայական կիրառությամբ: Անշուշտ, թվական բաղադրիչներով վերլուծական կրկնավորները հեղինակային (անհատական) նորակազմություններ չեն, սակայն, որպես կրկնության դրսևորում, մենք դիտարկել ենք դրանք Աստվածաշնչի և հինգերորդ դարի մատենագրության լեզվում: Մյուս կողմից՝ դրանք լայն գործածություն չունեն քննության ենթակա բնագրերում. հանդիպում են *երկու երկու, եթն եթն, յիսուն յիսուն* և այլ կրկնավորները:

Երկու երկու – Եւ ամենայն անասնոց և ամենայն գազանաց և ամենայն մարմնոյ՝ *երկու երկու* մուտցես ի տապանն բուծանել ընդ քեզ (Ծնն., 2, 19):

Հանդիպում է Եղիշեի երկում, ինչպես՝ Հրաման տայր *երկուց երկուց* գոյգ ... ելանել ի շինէն (Փարպ., 123): Միաբանեցին *երկու երկու* իբրև ամուլք հաւանք և հաւասարք՝ ուղիղ տանելոյ զակոսն արքայութեան (Եղ., 202):

Եթն եթն – Եւ ամենայն անասնոց սրբոց մոյծ ընդ քեզ *եթն եթն* արու և էգ, և ամենայն անասնոց որ ոչ են սուրբ՝ երկուս երկուս արու և էգ. (Ծնն., Է, 2, 3):

Որևէ պատմիչի երկում չի հանդիպում:

դ) Մակբայական բաղադրիչներով ձևավորված կրկնավորներ

Մակբայական բաղադրիչով կրկնավորներն ունեն նույն այն խոսքի մասի արժեքը, ինչ նրանց բաղադրիչները, հատկապես հիմնական բաղադրիչը՝ կրկնյալը: Այդպիսի կրկնությունը կոչվում է *համագործառական* (Զահունկյան, 1989, էջեր 216–217): Քննության ենթակա բնագրերում հանդիպում է միայն *յոյժ յոյժ* կրկնությունը:

Յոյժ յոյժ հարադրությունը նշանակում է «սաստիկ, չափազանց»¹⁰, եզակի կիրառություն ունի հինգերորդ դարում: Աստվածաշնչում գործածված է հետևյալ նախադասության մեջ. Եւ սաստկանար ջուրն *յոյժ յոյժ* ի վերայ երկրի, և ծածկէր զամենայն լերինս բարձունս (Ծնն., Է, 19):

8 Կրկնավոր բարդության արմատական բաղադրիչը՝ *մանր*, հանգում է բնիկ հնդեվրոպական *manu-
-r (*men) «փոքր, փոք- բացնել» արմատին (ՋՄԲ, էջ 509):

9 ԵՃԲ-ն տալիս է *մանրամանր* ձևով (հ. 2, էջ 208):

10 Հարադրության սերող բաղադրիչն ունի «հույժ, շատ» իմաստներ. կազմված է յ- նախդրով՝ իրանական ծագման *յոյժ* բառից (ՀԱԲ, 3, էջ 404–405: ՋՄԲ, էջ 554):

Պատմագրության մեջ հանդիպում է միայն Բուզանդի երկում. Լինէր սաստիկ պատերազմ *յոյժ յոյժ* (Բուզ., 15):

ե) *Նախդրավոր կրկնավորներ*. որոշ արմատական կրկնավորների բաղադրիչներ կարող են միանալ նախդիրներով (Պետրոսյան, 1987, էջ 77): Աստվածաշնչում հանդիպում են *օր ըստ օրէ, դէմ ընդ դէմ, խառն ի խոռն* և *լու ի լու* կրկնավորները:

Դիտարկենք այդ բառերի արտահայտության և բովանդակության պլանները հինգերորդ դարում: Արտահայտության պլանում առկա են արմատական գոյականներ (օր, աջ), ածական (խառն), մակբայ (դէմ) և բայափոխ (լու): Ինչպես նկատում է Գ.Ջահուկյանը, «նրանց արտահայտության պլանը որոշ զուգահեռներ ունի բովանդակության պլանի հետ. հնչակրկնությունը հաճախ արտահայտում է նաև իմաստային կրկնություն. գոյականների դեպքում՝ շատություն, գործողությունների դեպքում՝ հաճախայնություն և այլ իմաստներ» (Ջահուկյան, 1989, էջ 216):

Օր ըստ օրէ կրկնավոր բարդությունը կազմված է *օր* հիմնական բաղադրիչի կրկնությամբ և *ըստ* նախդրով¹¹: Գրաբարում այն նշանակում է «գիշեր և ցերեկ միասին, ցերեկ, ցերեկվա տևողություն, ժամանակ, տարի, փխբ. կյանք»: Նախդրավոր կապակցությունը՝ *օր ըստ օրէ*, նշանակում է «օրեցօր, հետզհետ»։ այդ իմաստով այն գործածված է Աստվածաշնչում, հմմտ. Օրհնեցէք զՏէր, ամենայն երկիր, պատմեցէք *օր ըստ օրէ* գփրկութիւն նորա (Ա. Մնա., ԺԶ. 23):

Հանդիպում է Բուզանդի, Փարպեցու և Ագաթանգեղոսի երկերում: Հմմտ.

Եւ գմիօրինակ զթագն *օր ըստ օրէ* ինքեան և նմա թագաւորն Պարսից զարդ պատրաստէր (Բուզ., 105): «Աւետարանեցէք *օր ըստ օրէ* գփրկութիւն» (Ագաթ., 327): Տեսանէին *օր ըստ օրէ* զաճումն յառաջադիմութեան յորդիս ազգի նահատակելոց Մամիկոննէից (Փարպ., 111)¹²:

Խառն ի խոռն հարարդրության *խառն* արմատը գործածական է «1. խառնված, անմիատարր, ոչ պարզ, 2. փխբ. պիղծ, խառնակ» բառական նշանակություններով¹³: *Խառն* արմատի (ձայնավորի) ձայնդարձով ձևավորվել է *խոռն* տարբերակը՝ «ամբոյս, խառն բազմություն» իմաստով. արմատակրկնությամբ՝ *խառն ի խոռն* հարարդրությունը՝ «անկանոն, վայրիվերո, խռնված» իմաստներով: Հանդիպում է Աստվածաշնչում. Եւ ամենայն ինչ *խառն ի խոռն*. արիւն և սպանութիւն, գողութիւն և նենգութիւն ... (Իմաստ., ԺԴ, 25):

Հանդիպում է Խորենացու, Եղիշեի և Փարպեցու երկերում: Հմմտ. Ի բաժանել լեզուացն ընդ ամենայն երկիր, ոչ *խառն ի խոռն*, և ոչ առաջնորդ այս լինէր, այլ... (Խոր., 91): Զամփոփումն սուրբ ոսկերաց նոցա ոչ *խառն ի խոռն* ի մի վայր ժողովելով, այլ գմի մի ի նոցանէ... ի վեց տապանս ժողովեալ էր (Եղ., 108): Վարելով ըստ անգիտութեան *խառն ի խոռն*՝ ոգւոց շատ ծանր

11 Օր բաղադրիչը ստուգաբանորեն հանգում է բնիկ հաղեվրոպական *amōr «օր» արմատին (Ջահուկյան, 2010, էջ 104):

12 Փարպեցու «Թուղթ առ Վահան Մամիկոնեան» գործում հանդիպում է *աուր աուր* հարարդրությունը. Չոր *աուր աուր* ... ընկելեալ վտաագիւ՝ տանէի ամենայն ի հարկէ (Փարպ., 201):

13 Հարարդրության արմատական բաղադրիչն է *խառն* ածականը, որ համարվում է խեթական փոխառություն *harna* «շարժել, խառնել, խռովել, գրգռել» բառից (Ջահուկյան, 2010, էջ 318):

լինի (Փարպ., 177):

Դէմ ընդ դէմ հարադրությունը կազմված է կրկնվող *դէմ* արմատից՝ *ընդ* նախդրով: *Դէմ* արմատը¹⁴ բազմիմաստ բառ է (հաճախ՝ անեզական գործածությամբ). «դենք, երես, երեսակողմ, անձ, աչք, տեսողություն. դեպի (նխդր.)»: Հարադրության կազմում արտահայտում է տեղի իմաստ՝ «իրար դէմ՝ դիմաց՝ հանդեպ. երես առ երես», այդ իմաստով այն գործածվում է Աստվածաշնչում, հմնտ. Ելանիցէք մերկք՝ միմեանց *դէմ ընդ դէմ*, և անկանիցիք ի լերինն Ռեմանայ (Ամովս. Գ. 3): ,

Հանդիպում է Բուզանդի և Եղիշեի երկերում: Արք և կանայք զպղծութեամբ ճիւղադութեամբ պարուք *դէմ ընդ դէմ* հարկանելով... զմեռեալսն յուղարկէին (Բուզ.,193): Ընդ որս և դուք էք այսօր կրկին երևեալ... պատենազէն գրահիւք *դէմ ընդդէմ* ընկերակից սատանայական գործոյն (Եղ.,112): Կային ճակատեալք երկոքեան կողմանքն *դէմ ընդդէմ* միմեանց (Փարպ., 134):

Լու ի լու նախդրավոր բարդությունը կազմված է *լսեմ* բայի երկրորդ հիմքի կրկնությամբ՝ *լու*¹⁵ : *Լու* հիմքը բառակազմական հիմնական ձևույթ է որոշ բառերում, ինչպես՝ *հլու* («լավ լսող, խոնարհ»), *լուր* (ը աճականով), *լուն* (ը աճականով) և այլն:

Լու ի լու կրկնավոր բարդությունն ունի «լսելով, լսելի լինելով» մակբայական նշանակություն. այդ իմաստով հաճախադեպ գործածություն ունի Ատվածաշնչում, հմնտ. Պատասխանի ետ Եփրոն Քետացի Արրահամու և ասէ *լու ի լու* որդւոցն Քետայ և ամենեցուն, որ մտանէին ընդ դուռն քաղաքին նորա (Ծնն., ԻԳ. 10): Լուարոնք, լուարոնք բանից իմոց, զի պատմեցից ձեզ *լու ի լու* (Յովբ., ԺԳ., 17):

Հանդիպում միայն Փարպեցու «Թուղթ առ Վահան Մամիկոնեան» երկում. *Լու ի լու* այլոցն զինչպէտս խօսին (Փարպ., Թ., 201)¹⁶:

Այսպիսին են վերլուծական արմատակրկնության դրսևորումները հինգերորդ դարում, որ հանդիպում են Ատվածաշնչի թարգմանական գրքերում և ինքնուրույն մատենագրական երկերում:

Ստորև ներկայացնում ենք համադրական կրկնավորների գործածության վիճակագրությունն ըստ Ատվածաշնչի և հինգերորդ դարի պատմիչների երկերի:

	Կրկնավորներ	Ս. Գիրք	Խոր.	Ազգաթ.	Եղ.	Փարպ.	Բուզ.	Եզն.	Կոր.
1.	արագ արագ	+	—	+	—	—	+	—	—
2.	գունդ գունդ	+	+	+	+	—	+	+	—
3.	դաս դաս	+	—	+	—	—	—	—	+ —

14 *Դէմ* արմատը ստուգաբանորեն հանգում է պարսկական աղբյուրին՝ *dēm* «կերպարանք, ձև» իմաստով (Ջահուկյան, 2010, էջ 660):

15 *Լսեմ* բայն ստուգաբանորեն հանգում է բնիկ հնդեվրոպական **k'leu* արմատին՝ նույն նշանակությամբ (Աճառյան, 1973, էջ 306–307; Ջահուկյան, 2010, էջ 30):

16 Ազգաթանգեղոսի և Եզնիկի երկերում գործածված է *գունդ առ գունդ* նախդրավոր կազմությունը («խումբ–խումբ, խմբերով»), որ Աստվածաշնչում չի հանդիպում: Հմնտ. *Գունդ առ գունդ* ձակատել ոչ առնուին յանձն (Ազգաթ., 26): Մի *գունդս առ գունդս* կազմեցեն՝ հանելոյ զհէնն յաշխարհէ (Եզն., 162):

4.	դէմ ընդ դէմ	+	—	—	+	+	+	—	— —
5.	երկու երկու	+	—	—	+	—	—	—	— —
6.	ևթն ևթն	+	—	—	—	—	—	—	— —
7.	լու ի լու	+	—	—	—	+	—	—	— —
8.	խառն ի խուռն	+	+	+	+	+	—	—	— —
9.	մանր մանր	+	—	—	—	—	—	+	— —
10.	յոյժ յոյժ	+	—	—	—	—	+	—	— —
11.	շեղջ շեղջ	+	—	+	—	—	+	—	— —
12.	օր ըստ օրէ	+	—	+	—	+	+	—	—
		12	2	6	4	4	6	2	1

Այսպիսով, վերլուծական կրկնավոր բարդությունները Աստվածաշունչ մատյանի թարգմանական գրքերում կազմում են 12 բառ-միավոր, իսկ հին-գերորդ դարի յոթ հեղինակների գործերում հանդիպում է ընդամենը 25 միավոր-գործածություն:

Եզրակացություն

Ինչպես ցույց են տալիս լեզվական փաստերը և նրանց վերլուծությունը, կրկնավոր բարդությունների վերլուծական տիպը որոշակի գործածություն ունի հինգերորդ դարի ինչպես թարգմանական գրականության, այնպես էլ ինքնուրույն մատենագրության լեզու: Վերլուծական կրկնավորները դասակարգվում են ըստ կրկնվող պարզ բաղադրիչների խոսքիմասային արժեքների (գոյական, ածական, թվական, մակբայ) և ըստ կապակցող նախդիրների (ի, ըստ, ընդ):

Կատարված վիճակագրությունը վկայում է առ այն, որ Աստվածաշունչ մատյանը պատկանում է առավել բարձր ոճի դասին. վերլուծական կրկնավորների տոկոսային առավելությունը պայմանավորված է Աստվածաշնչի թարգմանիչների լեզվամտածողության բարձր մակարդակով և օբյեկտիվ իրականության հասկացությունների լեզվական կաղապարավորման լայն հնարավորություններով:

Արմատակրկնության վերլուծական տիպի ուսումնասիրությունը հայերենի պատմական բառագիտության և պատմական բառակազմության առանցքային հարցերից է:

Օգտագործված գրականության ցանկ

- Աբեղյան, Մ. (1968) *Երկեր*, հ. Գ, «Հայկական ՍՍՀ ԳԱ» հրատ., Երևան:
- Աճառյան, Հ. (1957) *Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների*, հ. 3, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան:
- Աղայան, Է. (1984) *Ընդհանուր և հայկական բառագիտություն*, ԵՊՀ հրատ., Երևան:
- Առաքելյան, Վ. (1984) *Հինգերորդ դարի հայ թարգմանական գրականության լեզուն և ոճը*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան:
- Աստուածաշունչ մարեան հին և նոր կրակարանաց.*(1997), Հայաստանի աստվածաշնչային ընկերություն, Մեծ Բրիտանիա:
- Բագրատունի, Ա. (1852) *Հայերէն քերականութիւն ի պէտք զարգացեղոց*, Սուրբ Ղազար, Վենետիկ:
- Խաչատրյան Լ. (2023) Լիակատար արմատակրկնությունը հինգերորդ դարի հայերենում որպես բարձր ոճի դրսևորում, ԳԱԱ ՇՀՀ Կենտրոնի «Գիտական աշխատություններ», Գյումրի, Հ. I (26), էջեր 192-202:
- Սկրտչյան, Է., Խաչատրյան, Լ. (2016) *Հայոց լեզվի պատմության դասընթաց. գրային ժամանակաշրջան*, «Ջանգալ» հրատ., Երևան:
- Պետրոսյան, Հ.(1987) *Հայերենագիտական բառարան*, «Հայաստան» հրատ., Երևան:
- Ջահուկյան, Գ. (1989) *Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն*, «Հայկական ՍՍՀ ԳԱ» հրատ., Երևան:
- Стариченок, В. (2008). *Большой лингвистический словарь*, издат «Феникс», Ростов-на-Дону.
- Туманян, Э. (1972). *Древнеармянский язык*, издать.”Наука”, Москва.

Բնագրային օրինակների սկզբնաղբյուրներ

(համառոտագրություններով)

ա) Հինհայերենյան բնագրեր

- Ագաթ. – Ագաթանգեղայ *Պատմութիւն Հայոց*, Տփլիս, 1909:
- Բուգ. – Փաւստոսի Բիւզանդացւոյ *Պատմութիւն Հայոց*, Թիֆլիս, 1913:
- Եգն. – Եգնկայ Կողբացւոյ *Եղծ աղանդոց*, Վենետիկ, 1826:
- Եղ. – Եղիշէի *Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին*, Ե., 1957:
- Խոր. – Մովսիսի Խորենացւոյ *Պատմութիւն Հայոց*, Տփլիս, 1913, տպարանի Ի.Ն. Սկորոխտոզովի, 1887:
- Փարպ. – Ղազարայ Փարպեցւոյ *Պատմութիւն Հայոց և Թուրթ առ Վահան Մամիկոնեան*, Տփլիս, 1904:
- Կոր. – Կորին *Վարք Մաշտոցի*, Գր., 1972:

բ) Աստվածաշնչի համառոտագրություններ

- Անովս – Անովս
Բ. Օրենք – Երկրորդումն Օրինաց
Եգեկ.– Մարգարէութիւն Եգեկիելի
Եսայ.– Մարգարէութիւն Եսայեայ

Թագ.- Գիրք Թագաւորութեանց Բ, Դ
 Թիւք – Թիւք
 Իմաստ.- Իմաստութիւն Սողոմոնի
 Ծննդ.- Գիրք Ծննդոց
 Դուկ.- Աւետարան ըստ Դուկասու
 Մարկ.- Աւետարան ըստ Մարկոսի
 Մնա. Ա. Բ.- Գիրք Մնացորդաց Ա, Բ
 Յովք – Գիրք Յովքայ

դ) Բառարաններ

Աճառյան, Հր. (1971–1979). *Հայերէն արմարական բառարան* (ՀԱԲ), հհ. Ա–Դ, Երևան:
Առձեռն բառարան հայկազնեան լեզուի (ԱԲ) (1865) Երկրորդ տպագրութիւն, Վենետիկ,
 Ի Սուրբ Ղազար:
Համարարբառ հին և նոր կրակարանաց (1895), աշխատասիրութիւն Թաղէոս
 վարդապետի Աստուածատուրեան Արապկերցոյ, ի տպարանի Առաքելական
 աթոռոյ Սրբոց Յակովբեանց, Երուսաղէ:
Նոր բառգիրք հայկազնեան լեզուի (ՆՀԲ) (1837), Երկասիրութիւն երից վարդապետաց,
 Գ.Աւետիքեան, Խ.Սիւրմէլեան, Մ.Աւգերեան, հհ. Ա–Բ, ի Վենետիկ, ի տպարանի
 Սրբոյն Ղազարու:
 Զահուկյան, Գ. (2010) *Հայերէն ստուգաբանական բառարան*, Երևան:

References

Abeghyan M.(1968) *Works* [Yerker]. v. 3, „Haykakan SSH GA” hratarakchutyun, Yerevan.
 (In. Arm.)
 Acharyan, H. (1957) *Liakatar k’erakanut’yun hayots’ lezvi` hamematut’yamb 562 lezuneru*.
 [Complete grammar of the Armenian language compared to 562 languages], h. 3,
 HSSRR GA hrat., Yerevan. (In. Arm.)
 Aghayan, E. (1984) *Yndhanur yev haykakan barragitut’yun*. [General and Armenian voca-
 bulary]. EPH hratarakchutyun, Yerevan. (In. Arm.)
 Arakelyan, V. (1984) *Hingerord dari hay t’argmanakan grakanut’yan lezun yev vochy* [The
 language and style of Armenian translated literature of the fifth century]. HSSH
 GA hrat., Yerevan. In. Arm.)
Astuatsashunch matean hin yev nor ktakaranats. (1997). [The Bible contains the Old and
 New Testaments]. “The Bible Society of Armenia” publ., Great Britain.. (In Arm.)
 Bagratuni, A. (1852). *Hayeren kerakanutiun i pets zargats elots’* [Armenian grammar accor-
 ding to developments]. “ St. Lazar” hratarakchutyun, Venetik. (In. Arm.)
 Khachatryan, L. (2023) *Liakatar armatakrknut’yuny hingerord dari hayerenum vorpes bar-
 dzr vochi drsevorum*. [Absolute reduplication in the fifth century in Armenian as
 a manifestation of high style]. GAA SHHH Kentroni «*Gitakan ashkhatut’yunner*»,
 Gyumri. V. I(26)., ejer 192–202. (In. Arm.)
 Mkrtychyan, E., Khachatryan, L. (2016) *Hayots’ lezvi patmut’yan dasynt’ats’*. *Grayin zha-
 manakashrjan*. [History of the Armenian language course. Literary period]. “Zangak”
 hratarakchutyun, Yerevan. (In. Arm.)

- Petrosyan, H. (1987). *Hayerenagitakan barraran* [Armenology Dictionary]. «Hayastan» hratarakchutyun, Yerevan. (In. Arm.)
- Jahukyan, G. (1989) *Zhamanakakits' hayots' lezvi imastabanut'yun ev barakazmut'yun*. [The semantics and word formation of Modern Armenian]. „Haykakan SSH GA” hratarakchutyun, Yerevan. (In. Arm.)
- Starichenok, V. (2008). *Bolshoy lingvisticheskiy slovar* [The Large Linguistic Dictionary], „Phoenix” publ., Rostov-on-Don. (In. Russ.)
- Tumanyan, E. (1972). *Drevnearmyanskiy yazyk* [Ancient Armenian language]. „Nauka” publ., Moscow. (In. Russ.)

Sources of original examples

(with summaries)

a) Ancient Armenian originals

- Agat'. – Agat'angeghay *Patmut'iwn Hayots'* [History of Armenians], Tp'khis, 1909.
- Buz. – P'awstosi Biwandats'woy *Patmut'iwn Hayots'* [History of Armenians], T'iflis, 1913.
- Yezn. – Yeznkay Koghbat'swoy *Yeghts aghandots'* [The Yeghts sect], Venetik, 1826.
- Yegh. – Yeghishei *Vasn Vardanay yev Hayots' paterazmin* [Vasn Vardanai and the Armenian War], Ye., 1957.
- Khor. – Movsisi Khorenats'woy *Patmut'iwn Hayots'* [History of Armenians], Tp'khis, 1913, tparani I.N. Skorokhodovi, 1887.
- P'arp. – Ghazaray P'arpet'swoy *Patmut'iwn Hayots' yev T'ught' arr Vahan Mamikonean* [History of Armenians and Paper on Shield Mamikonian], Tp'khis, 1904.
- Kor. – Koriwn *Vark' Mashtots'I* [Behavior of Mashtots], Gr., 1972.

b) Bible summaries

- Amovs – Amovs [Amos]
- B. Orenk' – Yerkrordumn Orinats' [Deuteronomy]
- Yezek.– Margareut'iwn Yezekiyeli [Ezekiel]
- Yesay.– Margareut'iwn Yesayeay [Isaiah]
- T'ag.– Girk' T'agaworut'eants' B, D [Kings]
- T'iwk' – T'iwk' [NumbersChronicles]
- Imast.– Imastut'iwn Soghomoni [Song of Solomon]
- Tsnn.– Girk' Tsndots' [Genesis]
- Ghuk.– Awyetaran yst Ghukasu [Luke]
- Mark.– Awyetaran yst Markosi [Mark]
- Mna. A. B.– Girk' Mnats'vordats' A, B [Chronicles]
- Yovb – Girk' Yobay [Job]

c) Dictionaries

- Acharyan, Hr. (1971-1979). *Hayeren armatakan barraran (HAB)* [Armenian Radical Dictionary], hh. A–D, Yerevan:
- Arrdzern barraran haykaznean lezui (AB)* [Hand dictionary of Haykaznian language] (1865)

- Yerkroord tpagrut'iwn, Venetik, I Surb Ghazar.
- Hamabarbar hin yev nor ktakaranats'* [Verbatim Old and New Testaments] (1895), ashkhatasirut'iwn T'adeos vardapeti Astuatsaturean Arapkerts'woy, i tparani Arrak'elakan at'vorroy Srbot's Yakovbeants', Yerusaghe:
- Nor barrgirk' haykazean lezui (NHB)* [A new dictionary of the Haikazian language] (1837), Yerkasirut'iwn yerits' vardapetats', G.Awyetik'ean, KH.Siwmelean, M.Awgerean, hh. A-B, i Venetik, i tparani Srboyn Ghazaru.
- Jahukyan, G. (2010) *Hayeren stugabanakan barraran* [Armenian etymological dictionary], Yerevan.

Лалик Хачатрян

*Заведующий лабораторией лингвистических исследований
Армянского государственного педагогического университета им. Х. Абовяна,
доктор филологических наук, профессор
Эл. адрес: lingualal51@mail.ru*

АНАЛИТИЧЕСКАЯ КОРНЕВАЯ РЕДУПЛИКАЦИЯ В ЯЗЫКЕ АРМЯНСКОЙ БИБЛИОГРАФИИ V ВЕКА

Редупликации, созданные по закономерностям повторения, сформировались по аналитическим и синтетическим моделям словообразования, которые являются неотъемлемой частью лексики древнеармянского языка. Такие сложные слова широко использовались в переводных книгах Библии и с определенной периодичностью употреблялись и в библиографических памятниках V века.

В статье проводятся параллели между Библией и трудами историков пятого века, чтобы выявить функциональную частоту повторяющихся осложнений.

Исследование показывает, что аналитическая редупликация имеет разные модели. Встречаются аналитические конструкции с повторением простых корней, а также повторы, образованные предлогами, например: *իրիզ ւրիզ, մանր մանր, դիւի դիւի, յոյժ յոյժ, երկու երկու, եւթն եւթն և իստն ի իստն, դէմ տ դէմ, յո ի յո* и т. д. С другой стороны, совместные повторения встречаются и с повторением артикля; *շէղսի շէղսի, գոննի գոննի* и т. д.

Исследование проводилось с помощью синхронного подхода в рамках сравнительно-исторического метода.

Ключевые слова: Библия, редупликация, лексикография, самостоятельный корень, модель, аналитические сложные слова, древнеармянский язык.

Lalik Khachatrya

Head of Linguistics Research Laboratory, Kh. Abovyan Armenian State
Pedagogical University, Doctor of Philology, Professor

Email: lingualal51@mail.ru

ANALYTICAL REDUPLICATION OF ROOTS IN THE LANGUAGE OF ARMENIAN BIBLIOGRAPHY OF THE 5TH CENTURY

The complications created by patterns of reduplication are an integral part of the vocabulary of Old Armenian and were widely used in translation books of the Bible. There are a number of reduplications in the Holy Book formed by independent roots, which with a certain frequency were also used in the bibliographical monuments of the fifth century.

The study shows that analytical reduplications have different patterns: analytical constructions with the reduplication of simple roots are found, as well as repetitions formed by prepositions, such as: *արագ արագ, մանր մանր, դաս դաս, յոյժ յոյժ, երկու երկու, եւթն եւթն և խառն ի խուռն, դէմ առ դէմ, լու ի լու etc.* On the other hand, joint reduplications are also found in expressions involving articles: *շեղջու շեղջու, գունդս գունդս etc.*

The study has been carried out by synchronous research within the historical-comparative method.

Key words: Bible, reduplication, lexicography, independent root, pattern, analytical complexity, Old Armenian.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2023թ. ապրիլի 19-ին:

Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2023թ. ապրիլի 25-ին:

Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2023թ. մայիսի 10-ին: